ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Թովմաս Թերզյանը ծնվել է 1840 թ. հոկտեմբերի 21-ին՝ Պոլսի Բերա թաղամասում։ Հայրը իզմիրցի հայ էր, մայրը՝ իտալուհի։ Ընտանիքում խոսակցական լեզուն հունարենն էր, նաև՝ իտալերենը, ֆրանսերենը և մի քիչ էլ՝ թուրքերենը։ Թովմասը, որ ծնողների անդրանիկ զավակն էր, մինչև Սագրզ Աղաճի վարժարան ընդունվելը հայերեն բոլորովին չէր խոսում։

1850—1851 թթ. նա սովորում է Սագրզ Աղաճի վարժարանում։ Պատանու մտավոր կարողությունները աննկատ չեն մնում վարժարանի ղեկավարության ուշադրությունից, և 1852 թ. մի խումբ առաջավոր աշակերտների հետ միասին Թերզյանն ուղարկվում է Վենետիկի Ռափայելյան վարժարան, ուր սովորում է մինչև 1858 թ.։

Վերադառնալով Պոլիս, Թերզյանը նվիրվում է երիտասարդ սերնդի ուսուցմանն ու դաստիարակմանը. նա դասավանդել է Պոլսի դրեթե բոլոր վարժարաններում։ Շուտով ուսուցչի նրա համբավը տարածվում է հայ հասարակական կյանքի շրջանակներից դուրս, և նրան հրավիրում են օսմանյան պետական վարժարանում աշխատելու։ Տարբեր ժամանակներում նա դասավանդում է Հարպիեի (զինվորական վարժարան), Կալաթա-Սերայի Լեգիոնի և Միլքիեի վարժարաններում՝ որպես ֆրանսերենի ու լատիներենի ուսուցիչ։ Թերզյանին են աշակերտել Պերպերյանն ու Չերազը, Տեմիրճիպաշյանն ու Զոհրապը, Անաիսն ու Ալփիարը, Երուխանն ու Զիֆթե-Սարաֆը և ուրիշներ։ Կյանքի վերջին տարիներին Թերզյանը հրավիրվում է Պոլսի Ազգային Կեդրոնական վարժարան, ուր և նրան աշակերտում է Արշակ Չոպանյանը։

Խուսափելով սուլթան Համիդի անձնական անբարեհաճ ուշադրությունից և օսմանյան գրաքննության դաժանությունից, Թերզյանը շատ հազվադեպ է հանդես գալիս լրագրերում և նույնիսկ մտածում է ընդմիշտ հեռանալ Պոլսից։ Սակայն նա չի դադարում ստեղծագործելուց և իր ձեռագրերը պահ է տալիս իր այլազգի բարեկամներին. դրանց մի մասը նրա մահից հետո անհայտացավ։

Կրտսեր որդու՝ Արմանի, մահը ծանր հարված հասցրեց Թերզյանին, և շատ չանցած՝ 1907 թ. նա կաթվածահար եղավ։ Սակայն նրա անհանգիստ միտքը շարունակում էր ստեղծագործել. բանաստեղծությունները թելադրում էր ավագ որդուն կամ իրեն այցելության եկած սաներին։ Այդ օրերին են գրվել «Սանդուխտ» ողբերգության «Նախերգանքը» և բազմաթիվ այլ քերթվածներ, որոնք հետագայում Արշակ Չոպանյանը հրատարակեց իր կազմած երկհատորյակում։

1909 թ. փետրվարի 8-ին ընդմիշտ լռում է Թերզյանի քնարը։

Գրական ասպարեզ իջնելով ու ստեղծագործելով այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հրապարակի վրա էին Ալիշանն ու Պեշիկթաշլյանը, երբ իր

տաղանդի ողջ շռայլությամբ փայլում էր Դուրյանը, Թերզյանն կարող էր ստվերում մնալ, եթե չունենար սեղծագործելու իր անհատական նկարագիրը։

Ուսուցիչ ունենալով Ալիշանին, Թերզյանը շարունակեց նրանով սկսված բեկումը արևմտահայ քնարերգության մեջ և իր ստեղծագործություններով դյուրացրեց ռոմանտիզմի հաղթանակը։ Նա յուրատեսակ համաձուլումը եղավ Ալիշանի և Պեշիկթաշլյանի և յուրացրեց այն նորը, որ թելադրում էր ժամանակը։

Ժամանակին արտահայտվել է այն կարծիքը, որ Թերզյանը «շնորհի ու փափկության երգիչ մըն է, կորովի ու բարձր թռիչքե զուրկ, թե ան սիրերգու մը կամ եղերերգու մըն է, որուն գործին մեջ մտածումը քիչ տեղ ունի»[1]. երբեմն էլ նրան համարել են «անցյալի ճարտար ու ոգեշնչյալ ոգող մը, հին գրական բանաձևերու հարած և զանոնք տաղանդով կիրարկող բանաստեղծ մը»[2], որին խորթ են ժամանակի ոգին ու ճաշակը։

Սակայն բուն ստեղծագործությունը հակառակն է համոզում։ Անգամ սիրային ու գեղեցկագիտական երկերում տիրող գիծը խոհն է, կյանքի և աշխարհի մասին ունեցած անձնական մտածումը։ Այս կամ այն առիթով գրած եղերերգերի մեջ նույնիսկ Թերզյանը երևում է իր խոհերով, աշխարհն ու կյանքը բացահայտելու անհագ միտումով։ Կորստի ցավն այս դեպքում լոկ առիթ է խորհրդածելու կյանքի ու մահի, անցավորի ու անանց հավերժության, մարդկային հոգու տառապանքների, նրա վերերկրյա խոյանքների շուրջը («Առ մայրն իմ», «Անհուսություն»)։

Նրա բազմաթիվ քերթվածներում առկա է ներշնչման, մտածողության, զգացողության և արվեստի միասնությունը, որ հազվադեպ երևույթ էր այդ տարիների արևմտահայ քնարերգության մեջ («Առ Լուսին», «Մտածություն», «Տերևք աշնան» և այլն)։

Զոպանյանի վկայությամբ, Թերզյանն առաջինն էր հայ գրականության մեջ, որ մշակել է վիպերգության ժանրը՝ Թումանյանից ու Վարուժանից առաջ[3]։ Նրա «Ապստամբք» վիպերգությունը, որ երիտասարդական շրջանի ստեղծագործություններից է և կրում է Միլտոնի «Կորուսյալ դրախտի» ազդեցությունը, ինքնատիպ ու խորունկ մի գործ է։ Թեև այդ ստեղծագործության մեջ հասած բնագիրը լրիվ չէ, սակայն պահպանված հատվածները հիշեցնում են միստիկական դյուցազներգության պատառիկներ, որոնք անխառն հիացումի ու հավատի մի ձոն են՝ ուղղված հզոր արարչին, որը Թերզյանի համար խորհրդանիշն է գերագույն ուժի, արդարության ու գեղեցկության։ Արդեն այստեղ նշմարվում են պանթեիզմի նախնական տարրերը, որն հետագայում իր զարգացումը գտավ Թերզյանի ստեղծագործություններում։

Խորապես ռոմանտիկական այս գործը հերքում է Թերզյանին լոկ տաղանդավոր սիրերգակ կամ եղերերգու համարելու թյուր կարծիքը։ Այն վկայում է, թե որքան հարուստ է Թերզյանի բանաստեղծական երանգապնակը։ Նա մտքի ու հույզի, երկնահաս խոհերի ու հոգեկան բուռն տվայտանքների, գործողության ու ծանրանիստ նկարագրությունների վարպետ է։ Նա զարմանալիորեն

---

1 Թ. Թերզյան, Բանաստեղծության ամբողջական հավաքածու, Վենետիկ, 1929, հ. 1, էջ խ—խա։

2 Նույն տեղում, էջ խա։

3 Նույն տեղում, էջ խէ։

կարողանում է անգամ միևնույն գործի մեջ զուգակցել բանաստեղծական խոհն ու ապրած զգացումը, անձնական ու անանձնական վիշտը, բնության գեղազվարճ տեսարաններն ու իրականության ճնշող պատկերները, հրապարակախոսական կրքոտ խոսքն ու տառապող սրտի մորմոքը, երգիծանքն ու ներբողը։ Իրավացի է Զոպանյանը, որ գրում է. «Թերզյան նվազ դասականորեն կատարյալ է, քան Պեշիկթաշլյանը, ու նվազ ջղուտ, քան Դուրյանը, բայց ավելի այլազան է, քան այդ երկուքը, ավելի ճոխ, ավելի լեցուն՝ գաղափարով, ավելի հրապուրիչ՝ իրեն հատուկ զմայլելի քնքշությամբ»[4]։

Թերզյանն արևմտահայ այն բանաստեղծն է, որ հրաժարվեց մեր գրականության մեջ վաղուց ի վեր տիրապետող տառապանքի, մղձավանջի ու եղերականության շեշտից և պոեզիայի մեջ բերեց մինչ այդ զգացվող գործողության պակասը, քնարական խոսքն ու գործողությունը միաձուլեց իրար հետ, մշակեց գրական այլազան սեռեր։ Սա էլ հենց Թերզյան-բանաստեղծի գնահատելի ծառայությունն է հայ գրականությանը։

Իբրև բանաստեղծ, Թերզյանն իսկապես նորարար է։ Նա արևմտահայ քնարերգությունը հարստացրեց ոչ միայն նոր թեմաներով, այլև նոր ժանրերով ու տաղաչափական ձևերով, օգտագործեց ոչ միայն հայկական ավանդական չափը, այլև՝ եվրոպական գրականության մեջ հայտնի բազում գործածական նորույթներ, ինչպես, օրինակ, սոնետը, հնչյակը (որ ինքը «նվազ» էր անվանում), հայկականացրել է դրանք և լայնորեն կիրառել իր ստեղծագործություններում։ Նա առաջինն էր մեզանում, որ կիրառեց 3—3—3 և 3—3—4 տաղաչափական ձևերը, որոնք հետագայում լայն տարածում գտան ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ քնարերգության մեջ և բանաստեղծությանը հաղորդեցին անսովոր նրբություն ու երաժշտականություն։

Երգ ունին անտառներ, և ծովու
Մութ անդունդք՝ հառաչներ, և անույշ
Ժրպիտներ՝ հույլ աստեղց, և ազու[5]...

Կամ՝

Ո՞չ գաղտնի ծաղրածու արձագանգը,
Ո՞չ սիրո պահապան հովանիք,
Չեն գիտեր իմ սրտիս տառապանքը,
Չեն գիտեր զազեկեզն իմ գաղտնիք[6]։

Իր արվեստի մեջ նորարար է Թերզյանը։ Նա երբեք ճոխ հանգին դերի չէ եղել և գաղափարը չի զոհել ձևին։ Ինչպես նկատում է Զոպանյանը՝ Վեռլենից առաջ Թերզյանն էր, որ արհամարհեց հարուստ հանգը՝ «առանց ատոր համար անհանգ, անչափ, անձև ոտանավորի մը սխալին մեջ իյնալու»[7]։

Թերզյանն առանձնակի կարևորություն էր տալիս տողերի ներդաշնակությանը, ներքին ռիթմին, բանաստեղծության ընդհանուր համաչափությանն ու երաժշտականությանը։ «Անոր քերթվածներուն մեջ խորհրդավոր ու խորունկ դաշնակություն մը, երաժշտություն մը կա՝ բառերու դաշնակութենեն զատ,—

4 Ա. Զ ո պ ա ն յ ա ն, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 146։
5 Թ. Թ ե ր զ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 401։
6 Նույն տեղում, էջ 407։
7 Նույն տեղում, էջ 314։

կկարծես լսել, զգալ կենդանի շունչ մը, երգ մը, որ կը թրթռա ու կը թրթռացնե հոգիդ...»[8]։

70-ական թվականներին արդեն ձևավորված բանաստեղծ էր Թերզյանը և ուներ աշխարհն ու իրադարձություններն ընկալելու իր ուրույն աշխարհայացքը, որը չէր սահմանափակվում միայն հայկական կյանքի շրջանակներով։ Նա արևմտահայ առաջին բանաստեղծն էր, որ հրաժարվեց ավանդական դարձած ազգային թեմաներից և գրականություն բերեց համամարդկային զգացումներ ու գաղափարներ։ Իր ստեղծագործություններում Թերզյանն հավակնել է արտահայտել տիեզերական կյանքն ու ողջ մարդկության ճակատագիրը։

Թերզյանը գեղեցկապաշտ բանաստեղծ էր և գեղեցիկի անմարելի տենչ են նրա քերթվածները։ Կյանքում ամենուր գեղեցիկը տեսնելու ցանկությամբ նա երբեմն չնկատելու է տալիս իրականության այլանդակ պատկերը և կամ կյանքի ժահրոտ կողմերում անգամ կարողանում է գտնել ու վեր հանել այն, ինչը գեղեցիկ է։ «Իր բանաստեղծության մեծագույն հատկանիշներն են գեղեցկապաշտությունն ու համազգայնությունը։ Տիեզերական գեղեցիկն է զոր կը գտնե ու կը պաշտե»[9]— գրում է Ինտրան։ Բայց գեղեցկապաշտությունը նպատակ չէ, այլ միջոց՝ իրականության պատկերն առավել ընդգծելու համար։ Թերզյանին ոգեշնչողը ոչ թե ամեն ինչից վեր գտնվող գեղեցիկն է, այլ կյանքում գեղեցիկը հաստատելու ցանկությունը։ Ընդհանրական, վերացական գեղեցիկը չէ, որ երգում է բանաստեղծը, այլ նրա երկրային արտահայտությունը։

Թերզյանի համար անմահ է այն, ինչը գեղեցիկ է։ Հավերժական գեղեցիկի այդ որոնումներն էլ նրան տանում են անգո մի աշխարհ, ուր իրականության դժոխային պատկերներից հոգնած բանաստեղծը փնտրում է իր երազած գեղեցիկը, բարին ու արդարը։ Սակայն կյանքում չգտնելով նրանց իրական պատկերը, նա հայացքն ուղղում է նրան, որն, իբր, ստեղծողն է բոլոր գեղեցկությունների, ու երևակայության ուժով գծում նրա աստվածային պատկերը։

Թերզյանի համոզմամբ՝ բնությունն ստեղծվել է ոչնչից՝ աստծո արարչագործությամբ և վերջինիս իրական պատկերն է այն՝ նրա պես վեհ ու գեղեցիկ, կատարյալ ու արդար։ Բայց տեսնելով, որ աստծո պատկեր բնությունն էլ անտարբեր է մարդկության վշտի հանդեպ, նրա հոգում ծնվում է մութ կասկածը.

Ա՜հ, բնություն անկաբեկիր,
Ահիվ հառին աչքս ի քեզ...
Ամենազոր քու Արարչիդ
Ճշգրիտ արդյո՞ք պատկերն ես[10]...

Աստծո գոյության ընդունումից մինչև չգոյությունը մի քայլ է միայն, որին սակայն բանաստեղծը հասնում է երկար ու հոգեկան բախումներով լի ճանապարհ անցնելուց հետո, հասնում է ներքին անզիջում պայքարի ճա-

---

8 «Արևելյան մամուլ», 7. VI. 1903։

9 Թ. Թերզյան, Բանաստեղծությանց ամբողջական հավաքածու, հ. 2, Վենետիկ, 1929, էջ 434։

10 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 317։

նապարհով, ոչ առանց ցավի, բայց և օրինաչափ անխուսափելիությամբ։ Տեսնելով նրա անտարբերությունը կենաց թշվառության հանդեպ, բանաստեղծի հոգում բարձրանում է մի հարց.

Արդյոք իրավ կա՞ս դու և հա՞յր ես գթած՝
Թե անրջոցս և եթ ծընունդ մը նրսեմ[11]...։

Եվ նրա անողոքությամբ զարմացած բանաստեղծը հիասթափված հարցնում է նրան, ով մարդկության հայր է կոչվում.

Թե բնավ չկաս, որո՞ւ են այս հրաշալիք
Օր ըստ օրե ծավալելով նորանոր.
Այլ եթե կաս՝ ինչո՞ւ համար այսքան վիշտք,
Այսչափ ի խոր խոցեն ըզսիրտ վիրավոր[12]։

Գնալով թանձրանում են խոհերը։ Բանաստեղծը ցանկանում է պարզել երկնի ու երկրի առեղծվածը, գոնե իր համար պարզել կյանքի գոյության ու նրա երկրային արտահայտության անկատարելության պատճառները։ Այս հողի վրա բախվելով աստծո և իրականության հետ, Թերզյանը նորից-նոր շեշտում է աստծո չգոյությունը.

Անծանոթին դրան առչև գլխիկոր,
Դարերով ծրռած մարդկություն բոլոր՝
Կը բախե, կրկին կը բախե մտադյուր,
Մեկ պատասխանի սպասելով իզուր[13]...

Նրա հոգում փլվում են երբեմնի երազները, և անհույս սպասումներից հոգնած բանաստեղծը մի նոր ընդվզումով ծառս է լինում ամենակալ, բայց անարդար այն զորության դեմ, որ «ծընավ ըզմեզ յուր առօրյա խաղալիկ»[14]։ Դուրյանական հզոր տրտունջն է այս՝ աշխարհն իր ծաղրի համար ստեղծած աստծո դեմ, որ ժայթքում է աստվածապաշտ Թերզյանի շուրթերից։ Եվ «անպատում կսկիծներով նետահար» բանաստեղծը արդար դատի է կանչում անարդար աստծուն՝ որպես վկա կանչելով դարերին ու տիեզերքին և նրանց սովորեցնում է չխաբվել իր նման, շտրվել «սին անրջաց», քանզի «սնոտի է երկինք»։ Բանաստեղծը աստծուն մեղադրում է չարագործության մեջ՝ «մարդկությանը իր ձանձրությանց զբոսանք» ստեղծելու համար («Աշնան տերևք»)։ Նա աստծուն մեղադրում է իր պատկերակից մարդուն այս աշխարհը նետելու համար, ուր անօրենն է հպարտորեն իր գլուխը բարձրացնում, ուր աստծո անունով «վարագուրեալ խաբեբայք եղբայր եղբոր դեմ կը մղեն ի կրկեսս»։ Եվ աստծո չարագործություններից զայրացած բանաստեղծի հոգում ծնվում է արդար հատուցման զորավոր ցանկությունը.

---

11 Նույն տեղում, էջ 120։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, էջ 324։
14 Նույն տեղում։

Այս անհատակ վրհին եզրեն ահա քեզ,
Անգութ իշխան, որ ցավերս կ'ըզբոսնուս,
Ի վրեժ այնչափ տառապանացս աղեկեզ՝
Դառն անեծքով մը կը ցնդիմ ես անհունս[15]...

Այս բանաստեղծությունը հեղինակի ընդվզող հոգու ճիչն է՝ ուղղված իրականությանը՝ «այս ապիրատ պանդոկին»։

Այս ամենով հանդերձ, Թերզյանը մարտնչող բանաստեղծ չէ։ Զոհրապի խոսքերով ասած՝ «նա լացելուց ու խնդալուց բացի ժպտիլ ալ գիտե, ժպիտ, որ համակերպություն կը նշանակե կյանքի տվյալ պայմաններուն»[16]։ Թերզյանը տեսնում էր կյանքի ստվերոտ կողմերը, մերկացնում դրանք, բայց և պայքարի երդը չէ, որ հնչեցնում էր նա, այլ սպասումի և համակերպության.

Սիրտդ վիրակապ՝ կրթնելով ցըպի՝
Քալե գլխիկոր ուղին աշխարհի[17]։

Բանաստեղծի մանկության օրերին փոխարինելու են եկել գիտակցական կյանքի ծանր տարիները։ Երազները տեղի են տվել իրականությանը, պատրանաթափ ու գետնամած ընկել են երբեմնի ցնորքները, կյանքը դարձել է անառավոտ մի գիշեր և անցյալի քնքույշ երազներն ավելի քան ցանկալի են դարձել. «Դարձի՜ք, դարձի՜ք ինծի, քընքույշ ցընորքնե՜ր...»— կանչում է նոր տեսիլքների կարոտ բանաստեղծը։

Որքան էլ ճնշող է իրականությունը, արհավիրքներով լի, բայց և կյանքանապատի այդ ահավորությունն անգամ չի ընկճում բանաստեղծի ոգին, և նա հեռավոր երկինքներից նշմարում է գարնան ավետաբեր այգաբացը.

Բայց անդրագոյն մեկ երկնքե
Նոր այգ մ՝ աչքիս կը ծագի՝
Իբրև գարնան մ՝ ավետաբեր
Որ ալ ձրմեռըն չունի[18]։

Թերզյանը զգում է, որ մթին գիշերը հավերժական չէ և նրան փոխարինելու կգա լույս առավոտը։ Այս հավատով էլ հենց գիշերներից հոգնած բանաստեղծը սպասում է առավոտին.

Փոքըր մի ևս, գուցե երկինք ինձ ժըպտի,
Առավոտ գա, սև ամպն ու մութ փարատի[19]։

Որպես արթուն ու զգոն արվեստագետ, Թերզյանը հուսալքության ամենածանր տարիներին անգամ չմոռացավ իր կոչումը ու մնաց պատնեշի վրա։ Նա դասալիք չեղավ կյանքի կռվում և, բանաստեղծի իր կոչմանն հավատա-

15 Նույն տեղում, էջ 325։
16 «Մասիս», 5. XII. 1892։
17 Թ. Թերզյան, Նշվ. աշխ., հ. 1, էջ 90։
18 Նույն տեղում, էջ 301։
19 Նույն տեղում, էջ 450։

րիմ, հույսեր ներշնչեց լքված հոգիներին։ Դրա լավագույն ապացույցն է Եղիա Տեմիրճիպաշյանին նվիրված համանուն բանաստեղծությունը։

Մինչ ցուրտ ու անօրեն աշխարհից հիասթափված Տեմիրճիպաշյանը կյանքի ունայնությունն է տարփողում և իր երբեմնի աստեղախույզ հայացքը խոնարհում հողին՝ գերեզմանի լռության մեջ փնտրելով դրախտը, Թերզյանը սթափումի երգն է հնչեցնում և բանաստեղծին հուշում իր կոչումը, ցույց տալիս նրա տեղը կյանքի պայքարում։ Ժողովրդի հետ պետք է լինի քերթողը, և քանի դեռ մարդիկ զգում են նրա խոսքի պահանջը, նա չպետք է թողնի իր դիրքերը։ Քանի դեռ չեն դադարել բոլոր պատերազմները, քանի դեռ բանաստեղծի խոսքին կարոտ մի սիրտ կա աշխարհում, նա իրավունք չունի փշրելու իր քնարը, այլ «դրոշն ի ձեռին» պետք է «լրտեսե նա հորիզոն» մինչև որ Այգը ոսկով ներկի հողմածուփ աշխարհը։ Այս է զինվորի կոչումը, «առաքինյաց երջանկություն այս է լոկ»։

Թերզյան-բանաստեղծի սպառիչ նկարագիրը տվել է Զոպանյանը. «Ան առողջ ու քաջ տեսիլ մ՝ ուներ կյանքի, լավատես հաճախ, միշտ հավատավոր. գիտնալով ու տեսնելով հանդերձ կյանքի արհավիրքները, չարությունները, անոնցմով ներքնապես մորմոքելով հանդերձ, Բարության, Արդարության, Ճշմարտության վերջնական հաղթանակին հավատքով կյանքի տառապանքներն ու գձձությունները հաղթահարելու կամքը իր կյանքին ու մանավանդ իր գործին տիրական նշանաբանն է եղած»[20]։

Բնությունն այն հավերժական գեղեցկությունն է, որին փարում ու որից ներշնչվում են բոլոր բանաստեղծները։ Կյանքում չգտնելով գեղեցկության իր իդեալը, բարին ու արդարը, Թերզյանը նույնպես փարեց բնությանը՝ նրա գեղազվարճ պատկերներից հյուսելով իր երազած աշխարհի խորհրդանիշը։ Նա սիրում է կյանքը և իրականության մեջ է որոնում իր երազները։ Սակայն իրականությունն իր այլանդակ մարմինն է ցուցադրում բանաստեղծին, որն՝ հիասթափված այդ ճիվաղային կերպարանքից, հեռանում է՝ պատրանաթափ իր երազների ողբը շուրթերին։

Կյանքի հանդեպ անսահման սիրով էր նա աշխարհ մտել ու թեև ոտքերն արյունել էր փշերից, բայց աչքերի մեջ պահած հեռավոր աստղերի ցոլքն ու հայացքը նրանց հավերժական լույսին հառած՝ քայլում էր իր ցնորքների հետքով («Առ մայրն իմ»)։ Սակայն իրականությունը չի հանդուրժում լուսավոր ցնորքներ, և իր լուսաբաղձ երազներով երկրի մեջ օտար բանաստեղծը կյանքի կովում ընկնում է գետնաբեկ, բայց ընկնում է չպարտված, որ գալիք բարձրացումի նախանշանն է («Անհուսություն»)։

Աշխարհը դաժան է, մարդիկ՝ կեղծ ու ապիրատ։ Բանաստեղծը բախել է բոլոր դռները, բայց ոչ մի տեղ հոգեկան հարազատ հարկ չի գտել։ Բացված դռների ետևից նրան հայտնվել է իրականությունն ինքը՝ իր ողջ մերկությամբ։

Մեծությանց դուռը բաղխեցի սիրտ ի դող,
Բայց երբ շքեղ արքունյաց
Բացվեցան սեամք լուսազգյաց,
Տեսա հոն խումբ մ՝ ապիրատներ աղամող.
Զզվելով ընդ տեսիլն այն դժնյա՝
Հեռացա։

20 Նույն տեղում, էջ Լզ։

Սիրո տաճարն հուսով մտա և արդեն
Քաղցրաժպիտ և քնքույշ
Ինձ մոտեցավ դիցանույշ.
Իր ծոցին մեջ կուրսրվեր սիրտս ապազեն.
Բայց մինչ գլուխս աներկյուղ կը հանգչեր...
Նա մատներ[21]։

Հիասթափված բանաստեղծը բախում է ազատության սրբազան տաճարի դուռը՝ հուսալով այնտեղ գտնել հանգրվան ու պաշտպանություն, բայց սրբանվեր այդ տաճարն էլ դատարկ էր իսպառ. ազատությունն ընդհանրապես հեռացել էր աշխարհից։ Եվ դա այրող ցավի ու բողոքի հարց է դառնում բանաստեղծի շուրթերին.

Մի՞ թողուց դիցուհին իսպառ
Զայս աշխարհ[22]։

Թերզյանը ճանաչում է իրականությունը, ուր փողը միահեծան իշխում է բանականության ու զգացմունքների վրա և համարձակորեն գնում է խոր ընդհանրացումների՝ տալիս դրամատիրական աշխարհի բնութագիրը։ Ոսկին իրեն է ենթարկել ամեն մի շարժում ու դարձել կյանքի իմաստը, այն միակ գերագույն նպատակը, որին ուղղված է հարաճուն պայքարը («Աշխարհ»)։

Քայլ առ քայլ մերկացնելով կյանքի ժահրոտ կողմերը, բանաստեղծը պատռում է դրամատիրական հասարակարգի դեմքը քողազարդող ոսկեհուռ շղարշը և իրականությունը պատկերում այնպես, ինչպես որ այն կա։

Թերզյանն իր բանաստեղծություններում ընդգրկել է իրականության բոլոր կողմերը և կարծես նպատակ է դրել ստեղծելու նրա մանրանկարը։ Նա հանգել է այն համոզման, որ կյանքը ոճրագործությունների մի անվերջանալի շղթա է, որ սկսվում է այգաբացի հետ։ Որքան գեղեցիկ է բնությունը, իր էությամբ նույնքան սոսկալի է արթնացող կյանքը.

«Եվ հիմա սակայն պիտի արթննան մարդիկ...
Հիմա ատելությունը իր պատենին մեջ մխված
դաշույնը թերաքամ պիտի մերկացնե.
Հիմա անհագ շահամոլությունը իր որոգայթները պիտի լարե.
Հիմա հորացյալք խնջոյից պղծության մեջ անկողին պիտի մտնեն.
Հիմա անմեղը պիտի դողա անզգամին սպառնալյաց տակ.
Հիմա ժամն է, որ վագրը որջեն դուրս կ'ելլե.
Հիմա արթնցած է դատապարտյալն ալ, որ կը լսե
դահճին թուրին սրվիլը.
Կաշառագործ դատավորը, սրտին պես սև հագած,
պիտի երթա արդարին արյունը մատնելու.
Հիմա պիտի արթննա որբիկը և իզուր մայրիկն ու
հացի կտոր մը պիտի փնտրե[23]։

21 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 76։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ 403։

Սակայն այսքանով չի բավարարվում բանաստեղծը։ Շարունակելով իր մերկացումները, նա գնում է ավելի հեռուն, հասնում տիրակալների որջը և ցույց տալիս, որ նրանց ամենօրյա պայքարն էլ, վերջին հաշվով, ոսկու համար է։ Նրանք՝ փոքր ու մեծ այդ բռնակալները, սրբի դիմակ հագած գազաններ են, որ կեղեքում են ազգերին։ Բանաստեղծն այն համոզման է, որ ազգեր ու ժողովուրդներ միմյանց դեմ հանող պատերազմներն էլ տիրողների անձնական փառասիրության հետևանք են և որ այդ ամենի շարժիչ ուժը դարձյալ փողն է։ «Երկու գոռոզ խենթի համար» ոտքի ելած ազգերը կանգնում են ողբերգության առաջ, ջարդվում են բյուր պատանիք։ Նրանց արյան և արտասուքների հեղեղներով են սնվում տիրակալների փառաց դափնիները։ Ահավոր այս ճշմարտության դեմ բանաստեղծն անզոր է։ Զուր են խավարը ցրելու նրա ճիգերը։ Նա օտար է այս աշխարհում, նրան հեգնում ու ծաղրում են դիմակավորված գազանները։ Կյանքը նրա համար բանտ է, որի «ոչ ելք ծանոթ են ոչ մուտք»։ Մեռնում են անուրջները, եռանդը, որ ծովի պես շառաչում էր բանաստեղծի հոգում, սպառվում են խանդավառ ձգտումները։ Նրան մնում է «ժայռից վրա փշրել» իր քնարը և ընդունել, որ «աղետք միայն իրական են, իրավ է լոկ մութ շիրմին» («Կյանք»)։

Բայց դա մի պահ է լոկ։ Բանաստեղծը չի կարողանում հաշտվել մահվան գաղափարի հետ, ու նրա հայացքը հառվում է ամենազոր արևին, որը Թերզյանի համար գերագույն արդարության խորհրդանիշն է։ «Ե՛լ քրքմագույն առագաստեդ,— կանչում է նա,— Ե՛լ հալածե ճիվաղ անուրջս»։ Եվ աշխարհային ցավերով լցված բանաստեղծը փարում է բնությանը՝ «Ո՜վ մեծ բնություն, ես քու որդիդ եմ»[24]։

Բանաստեղծը հաշտ է բնության հետ և նրանից է ուզում ստանալ իրեն տանջող հարցերի պատասխանը։ Սակայն շուտով նա համոզվում է, որ բնությունն անտարբեր է մարդկության բախտի հանդեպ և ընդվզում է բնության դեմ.

Ա՜հ, բնություն անկարեկիր,
Ոչ մեկ ժըպիտդ է պակսեր,
Այսչափ ցավեր տեսնելեդ ետք,
Ոչ մեկ աստղիկդ է մարեր[25]։

Բնության ճանաչման հաջորդ փուլը բանաստեղծին ավելի ու ավելի է հեռացնում նրանից։ Բնությունը ոչ միայն անտարբեր է մարդկության բախտի հանդեպ, այլև ծածկում է աշխարհում կատարվող ոճրագործությունների հետքերը՝ դրանով իսկ հեռացնում հատուցման արդար պահանջը։ Ավելին, երբեմն բնությունն ինքն էլ է ելնում մարդկանց դեմ, ծաղրում նրա վշտերը։ Այս հողի վրա ընդվզելով բնության դեմ, Թերզյանը փորձում է բացահայտել նրա էությունը։ Նա բնությունը ոչ միայն հակադրում ու համեմատում է իրականության հետ, որն, հարկավ, նորություն չէր հայ քնարերգության մեջ, այլև նրա գեղեցկության ու կատարելության տակ էլ տեսնում է նույն անզիջում պայքարը, որպիսին առկա է կյանքում։

24 Նույն տեղում, էջ 225։
25 Նույն տեղում, էջ 316։

Բնության բացահայտման և բնություն-իրականություն հարաբերության արտահայտման վերջին աստիճանը եղավ «Առ ծով» բանաստեղծությունը, որով փաստորեն ավարտվում է բնության հանդեպ Թերզյանի ունեցած պաշտամունքը և բնությունն ու իրականությունը կանգնեցվում են կողք-կողքի։ Ծովն այստեղ արդեն դադարում է իբրև կատարելություն ճանաչված բնության մի մասը լինելուց և իր մեջ խտացնում է իրականության քստմնելի պատկերը։ «Միշտ մանուկ, միշտ շարժուն, միշտ անփոփոխ, երգ աղուական և վայրագ ծովը» իրական կյանքի խորհրդանիշն է՝ «Թարգման բոլոր մեր անթարգման կրքերուն»։ Իր գեղեցկության հետ այն նաև դաժան է, քանզի «ահընկեց կորովով» տապալում է տորմիղներ, որբացնում բազում սրտեր։ Այստեղ էլ կան գողտրիկ անկյուններ, ուր «կիսաբաց ոստրեեն մարգրիտն աղոտ կը փալփլի», ուր «անայցել դրախտներու մեջ» բացվում են ծաղկանց բաժակները, բայց այդտեղ ապրում են և գիշատիչներ.

Իրարու դեմ ի՜նչ սոսկալի նախճիրներ.
Ի՜նչ տենչք արյան... և ո՞վ գիտե ի՜նչ վայրագ
Սիրո կրակներ կամ կիրք փառաց կը վառվին
Այդ մութ հոգյաց անգիտակից խավին տակ[26]։

«Ցամաքն համր է, լոկ յուր բնակչաց հեծեծանք կամբոխեն զինք», բայց երկուսն էլ ապրում են տիեզերական նույն օրենքով՝ «որ կբաղխե աստղերն իրար, գազաններն անտառին մեջ, և հակառակ զուր ճգնաց՝ ազգերն իրար դեմ կարձակեն աննվեր»[27]։ Զուր է արևն իր հրաբորբ սափորից լույս ու ճառագայթ ցանում ջրերի վրա, նրանց խորքում շարունակվում է անդադրում պայքարը և դա այնքան ժամանակ, մինչև որ «դարերե վեր անհամար հատակիդ վրա նոր ցամաքներ դարբնող ճճին»[28].

Կույր գործավոր ապագայի մ՝ անծանոթ,
Կանգնե աշխարհ մը նոր՝ մեր դառն ախտերեն
Ի սպառ անբիծ, և մարդկություն մ՝ երջանիկ
Լուսավորե թերևս արևն այն ատեն[29]։

Ինչպես տեսնում ենք, բոլոր վայրիվերումներից, գետնահակ խոհերից ու վայրէջքներից հետո էլ Թերզյանն, այնուամենայնիվ, չի հիասթափվում աշխարհից ու մարդկանցից, չի դառնում մարդատյաց, այլ պայծառ մի լավատեսությամբ է նայում ապագային ու հավատում ժամանակի ախտերից անբիծ նոր կյանքի ու երջանիկ մարդկության գալիքին։

Այդ նույն լուսավոր հավատով են տոգորված նաև Թերզյանի հայրենասիրական երգերը, որոնք ազգային կյանքի մանրամասներով տեղայնացված չլինելով հանդերձ, հայ իրականության կենդանի արձագանքներն են։

Հայրենիքում ավար ու ավեր է, բռնություն ու մահ։ Փառաց երգերի տեղ համակ վիշտն է այնտեղ փռված, ինչպես «բուին թև»։ Այլևս չկա հերոսա-

26 Նույն տեղում, էջ 439։
27 Նույն տեղում, էջ 441։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում։

կան օրերի շռինդը, բռնության ու նախճիրների մեջ մարել է ազատության սերը։ Բռնությունը սև ժայռի պես ծանրացել է մարդկության վրա։ Ազատ բնության մեջ մարդը նման է շղթայակապ պանդուխտի, որի միակ այցելուն «հայրենյաց հեշտ զեփյուռն» է։ Բայց սիբիրյան սառցե բանտն իսկ անկարող է կոտրելու ազատության զինվորի հոգու կորովը։ Թերզյանը սիրով ու հիացումով է գծում ազատության զինվորի սխրալի կերպարը, որը թեև «նիհար, երկաթեն թևքը մաշած», բայց և չի վախենում կյանքի հարվածներից և համարձակորեն գնում է արհավիրքներին ընդառաջ։ Որքան էլ բաղցր է հայրենի զեփյուռը, բայց ազատության զինվորի հոգուն առավել ցանկալի է ահավոր փոթորիկը.

Փախի՛ր, զեփյուռ, ջնջեցե՛ք
Վրրաս, մրրիկ տխրորակք...։
Գոռացե՛ք, ո՛վ ինծի նման
Փոթորիկներ ահավոր[30]։

Նրա ազատաբաղձ հոգին փոթորիկ է տենչում, թեկուզև կռվի մեջ հոգնելով ինքն էլ ընկնի «անդր ի խոր»։ Փոթորիկն, այստեղ, ազատության խորհրդանիշն է. բանաստեղծության վերջին տողերում նա իր հոգին համարում է «մրրկաց ուրվական».

Այլ այդ սևցած ժայռին վրա
Հոգիս, մրրրկաց ուրվական,
Պիտի հսկե՝ բռնած դրոշն
Ազատության ի ծածան[31]։

Ազատությունը զոհեր է պահանջում, և այդ սուրբ պայքարում չպետք է լինել դասալիք։ «Քաջաց նման չիյնան մատնիչքն ի մարտի»— հիշեցնում է բանաստեղծը։ Ազատության նահատակ հերոսների, մոռացված նախնիների ստվերները կբորբոքեն ազատության հուրը և պատանիների բռունցքվող ձեռքի մեջ կդնեն բոցակիր սուսերներ.

Իշե՛ք նրման գիշերո, մահու ստվերք,
Մեն մի կաթիլ արյան զարթնու վրեժխնդիր.
Կուսից այտեր, ջերմ արտասվոք թրջեցեք.
Եվ պատանեաց սրվին սուսերք բոցակիր[32]։

Արձագանքելով այդ կոչին, ինչպես «սոսյաց անտառք դարևոր», արթնանում են նորօրյա դյուցազունները, որոնց ուժից ալեկոծվում է թշնամին։ «Դողա՛ ուրեմն, չըմեռնիր վրեժ ի սիրտ քաջաց»— ժողովրդյան ուժի հանդեպ ունեցած անսահման հավատով բացականչում է բանաստեղծը։ Դա բոլոր տեսակի բռնակալներին ուղղված ահեղ դատավճիռ էր, գալիք հատուցման ար-

30 Նույն տեղում, էջ 71—72։
31 Նույն տեղում, էջ 72։
32 Նույն տեղում, էջ 62—63։

դար պահանջ ու նաև՝ անխուսափ վախճան։ Այն առավել բացահայտ է հնչում «Խարազանը» նշանավոր քերթվածում, ուր անկրկնելի գծերով կերտված է սուլթան Համիդի աշմարիտ դիմանկարը։ Թերևս սա ամենաուժեղն է սուլթանի կերպարը բացահայտող բանաստեղծություններից, որ երբևիցե ստեղծվել է հայ գրականության մեջ։

Չնայած անհաղթահարելի պաշտպանությանը, սուլթանը լցված է անասնական վախով։ Նա զգում է, որ ռումբերն ու բերանբաց գամփռերն էլ չեն փրկի իրեն պատմության դատից։ Ու թեև նրա ոտքի տակ են բազում երկրներ, թեև պակաս չեն ոսկի ու արծաթ, բայց նա տխուր է, դժգույն ու նիհար, սարսափում է հատուցումից, գիտե, որ այն գալու է և սոսկումի մեջ փրկության ուղիներ է որոնում։ Բայց ուշ է արդեն։ Մարդկությունը չի ների նրա ոճրագործությունները։ Եվ այստեղ որպես ահեղ դատավճիռ հնչում են բանաստեղծի խոսքերը.

Վե՜ր վերցուր գըլուխդ, արքա՜, վե՜ր վերցուր.
Տես՝ սա ջահերուն ետին լուսասփյուռ
Մատ մ՝ է երկնցած որ դանդաղ դանդաղ
Այդ ոսկեդրվագ պատերուդ ի խաղ
Կը գրե մեկիկ մեկիկ՝ բաղդին պես՝
«Ալ ժամդ հասավ, Մանե, Թեկել, Փարես»[33]։

Սա ժողովուրդների պատմության դատավճիռն է բռնակալների հանդեպ, և անբեկանելի է այդ մահավճիռը։

Ստեղծագործական ելակետ ունենալով բարու, գեղեցկի և արդարի բարձրագույն իդեալը և այն դիտելով ոչ թե նեղ ազգային, այլ համամարդկային առումով, Թերզյանն ամեն ինչ ենթարկում է գերագույն այդ գաղափարին և ամենուր որոնում իդեալականը։ Ահա թե ինչու համարձակորեն կարելի է ասել, որ նրա ողջ ստեղծագործությունը իդեալականի որոնում է։

ТВОРЧЕСТВО ТОВМАСА ТЕРЗЯНА

К. Г. МАМИКОНЯН

Резюме

Творчество западноармянокого поэта Товмаса Терзяна по сей день оставалось неисследованным. Произведения Терзяна тесно перекликаются с историей армянского народа.

Терзян одним из первых после Алишана вступил на путь романтизма и всем своим творчеством способствовал развитию этого направления в западноармянской поэзии. Поэзия Терзяна пронизана большой жизнеутверждающей силой. Терзян обогатил западноармянскую поэзию новыми формами стихосложения, в частности, внес в нее сонет из европейской поэзии.

---

33 Նույն տեղում, էջ 431։ («Մանե, Թեկել, Փարես»—հաշված է, կշռված է, չափված է։ Ըստ Աստվածաշնչի՝ այս բառերը խորհրդավոր ձևով գրվեցին Բաբելոնի թագավոր Բաղդասարի արքունիքի պատին՝ բաբելոնյան թագավորության կործանման նախօրյակին)։